ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ Արա Զոհրաբյանի, Արմինե Ֆանյանի, Միսակ Մարկոսյանի, Գառնիկ Թուխտարյանի, Տաթևիկ Դավթյանի, Արսեն Համբարձումյանի, Արթուր Պողոսյանի և Արտյոմ Սուջյանի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 46-րդ կետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման 2024 թվականի առաջին կիսամյակի ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման 2024 թվականի առաջին կիսամյակի ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ժամանակացույցերը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 1/1-Լ
ք. Երևան
02 ապրիլի 2024թ.